ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հ. Վ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Ս. Ս. ՔՈՇԱՏԱՇՅԱՆ

Հայոց լեզվի՝ որպես օտար լեզվի ուսուցման առանձնահատկություններից մեկն այն է, որ հայերենը, լինելով աշխարհի հնագույն լեզուներից մեկը, ունի բազում շերտեր, և լեզվական շատ իրողություններ բացատրելի են պատմական զարգացման ընթացքով: Միշտ էլ հետաքրքրություն եղել է հայերենի նկատմամբ: Չմոռանանք, որ 19-րդ դարի կեսերին հայերենը, որպես հնդեվրոպական լեզու, ուսումնասիրվեց հնդեվրոպաբանների կողմից և վերջնականապես ընդունվեց որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ: Այժմ էլ օտարերկրյա շատ ուսանողներ հայերենն ուսումնասիրում են ոչ միայն իբրև հաղորդակցման միջոց Հայաստանում, այլ նաև լեզվական հետաքրքրություններից ելնելով:

Բնական է, որ հայերենի ուսուցումը հավուր պատշաճի առաջնահերթ կարևորություն պետք է ունենա աշխարհաքաղաքական մերօրյա պայքարի բովում և բազմալեզու միջավայրում: Ինչ խոսք, շատ կարևոր է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, որին խոչընդոտող գործոն կարելի է համարել դասագրքերի պակասը, ոչ բավարար գիտական շարադրանքը: Կարծում ենք՝ նախ և առաջ անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել դասագրքերի լեզվի մատչելիության, դրանց կառուցվածքի և բովանդակության խնդիրներին:

Քանի որ հայերենի ուսուցումը բազմալեզու միջավայրում արդեն մեծ հետաքրքրություն է առաջացրել, ուստի պետք է կարևորել տարբեր բնագավառներին համապատասխան նոր դասագրքեր կամ ձեռնարկներ ունենալու անհրաժեշտությունը: Դրանք պետք է լինեն մատչելի, գրված լեզվական մեկ մակարդակով՝ ուսումնառության արդյունավետությունն ապահովելու համար: Ուսումնական գործընթացում օտարերկրացի ուսանողին հայերեն ուսուցանելու համար իբրև դրդապատճառ ու հիմնավորում կարող են հանդես գալ պարտադիր ուսուցումը, հետաքրքրությունը, լեզուներ սովորելու ցանկությունը, միջավայրը, հաղորդակցման միջավայրը և, իհարկե, մասնագիտական պահանջը: Նշենք, որ ուսանողների՝ հայերենի հաղորդակցական հմտությունների զարգացումը ինչպես խթանող, այնպես էլ խոչընդոտող գործոններ կան:

Խթանող գործոն են մատուցման եղանակը և ուսանողի տրամադրվածությունը: Խոչընդոտող գործոններից է հասանելիությունը, ձեռնարկների ոչ բավարար մատուցման եղանակը, երբ պակասում են ճանաչողական բնագրերը տվյալ երկրի, ինչպես նաև հոգևոր մշակույթի մասին:

Մ.Հերացու անվան հայկական պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի ամբիոնում իրականացվում են արտալսարանային աշխատանքներ, որոնք օգնում են օտարերկրացի ուսանողներին՝ ներգրավվելու Հայաստանի սոցիալ-մշակութային կյանքում: Ամբիոնում իրականացվող արտալսարանային աշխատանքները հիմնականում գործնական առաջադրանքների, տեքստերի թարգմանությունների բնույթ ունեն, մեր երկրի հոգևոր

ժառանգության մասին տեղեկություններ են տրամադրում: Ուսուցման գործընթացում օգտագործվող ռեսուրսներն են՝ դասագրքեր, ձեռնարկներ, բառարաններ, էլեկտրոնային բառարաններ, քերականական տեղեկատուներ, ուսումնական նյութեր, բջջային կամ համակարգչային հավելվածներ, տեսահոլովակներ և այլն:

Հիմնականում արդարացված է գիտելիքների, հմտությունների գնահատման առկա համակարգը՝ բանավոր քննություն, գրավոր և բանավոր հարցում, թեստեր, բալային համակարգ, որոնք համապատասխանեցված են ուսուցման ժամանակակից մեթոդներին: Մեր կարծիքով, պետք է վերանայել թեստային առաջադրանքները, որովհետև անհամապատասխանություն կա գրավոր և բանավոր խոսքի միջև: Ճիշտ է, բանավոր խոսքում տեղեկատվությունն ավելի շատ է, գրավորում՝ ավելի կոնկրետ, իսկ միտքն արտահայտելու, գրագետ շարադրելու համար հարկավոր է յուրացնել բանավոր խոսքի դրսևորման սկզբունքները: Մտքերի հաղորդակցում իրականացնելու համար առաջարկում ենք զարգացնել, բարելավել կարճ, սեղմ բանավոր խոսքը, որի պակասն ունի մեր ուսանողությունը: Առաջարկում ենք հատուկ տեքստեր ընթերցանության համար, որովհետև ուսուցման ժամանակակից եղանակները նոր սերնդին հեռացրին ընթերցանությունից, որը բառապաշարը յուրացնելու միակ միջոցն է, որից և տուժեց բանավոր խոսքը:

Կարծում ենք՝ ուսումնական ծրագրերում հայ մշակույթը բավարար չափով է ներկայացված և ներառված ուսումնական գործընթացում: Տեղեկատվական արդի ժամանակաշրջանում ուսուցմանը զուգահեռ

բազմաթիվ են հոգևոր-մշակութային բնույթի բնագրերը: Ուսումնական գործընթացում բազմաթիվ միջոցներ կան սոցիալ-մշակութային իրազեկվածության և միջմշակութային փոխըմբռնման կարգավորման համար: Բացի դրանից, տուրիզմի զարգացումն ավելի լայն հնարավորություն է տալիս սոցիալ-մշակութային տեղեկատվության համար, նաև լրացուցիչ խմբակներն ու միջմշակութային կենտրոններն են իրենց ազդեցությունն ունենում ուսումնական գործընթացում:

Ներկա ինստիտուցիոնալ ուսուցման ռազմավարությունն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով: Քանի որ այսօր ուսուցումն ուսանողակենտրոն է, և դասախոսի ներդրումը առավելագույն չափով հնարավոր է դարձնում ուսանող-դասախոս փոխհամագործակցությունը, ուստի երաշխավորվում է գիտելիքի կայունությունը: Ուսուցման ռազմավարության մեկ այլ սկզբունքով գործում է նաև համախմբեցիների փոխգործակցությունը, որով էլ ապահովվում է մասնագիտական կարողությունների հմտությունը:

Ուսումնական գործընթացում կիրառվում են սոցիալական աջակցության որոշ եղանակներ: Նախ՝ յուրաքանչյուր կուրս ունի իր կուրատորը, որը պարբերաբար հանդիպում է ուսանողների հետ: Բացի կազմակերպչական աշխատանքներից, անդրադառնում է նաև սոցիալական որոշ խնդիրների, եթե դրանք առկա են, քննարկվում են, հնարավորության սահմաններում դրական լուծում ստանում: Երկրորդ՝ կապը միշտ պահպանվում է ուսումնական վարչության, համալսարանի

բոլոր վարչական օղակների հետ: Մեր կարծիքով, ուսանողն այսօր դրա պակասը չունի: Սակայն բուհերում առկա են նաև ակադեմիական սթրեսի վրա ազդող գործոններ:

Դրանք հիմնականում պայմանավորված են գնահատման համակարգով, երբեմն նաև՝ ոչ օբյեկտիվ մոտեցումներով: Մեր առաջարկը հակասթրեսային ռազմավարության վերաբերյալ սուբյեկտիվ է. առաջնային է գիտելիքը, և որոշ փոփոխություններ պետք է կատարել գնահատման համակարգում:

Կարևոր է այն հարցը, թե որքան պետք է լինի օտարերկրացիներին և, ընդհանրապես, հայերենի ուսուցմանը հատկացված օպտիմալ ժամաքանակը: Մեր կարծիքով, օտարերկրացիներին հայերենի ուսուցմանը հատկացված ժամաքանակը այն ակադեմիական ժամաքանակն է, որը նախատեսված է ուսումնական պլանով: Բայց կա մի կարևոր հանգամանք՝ պայմանավորված ուսանողների ընդունակությամբ և ցանկությամբ: Կարելի է ուսուցման ժամաքանակն ավելացնել, որը, իհարկե, պայմանավորված է այլ հանգամանքներով՝ հաշվի առնելով և վերլուծելով բուհում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի տեսական ու գործնական բաղադրիչների տարանջատումը և ներքաղաքական իրավիճակով պայմանավորված այլ գործոններ: